ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Օրակարգ
ՄԱԿ Եվրոպական տնտեսական հանձնաժողով «Նորարարություն հանուն կայուն զարգացման. Հայաստանի համար»
Բարձրաստիճան մեկնարկային միջոցառում, հունիսի 7, 2023թ.

Համատեքստ

1991 թվականին անկախության հաստատումից ի վեր Հայաստանը նկատելի առաջընթաց է գրանցել նորարարահեն կայուն զարգացման ուղղությամբ: Չնայած տարածաշրջանային ու աշխարհաքաղաքական անկայունության և ՔՈՎԻԴ-19 համավարակի հետևանքով ստեղծված մարտահրավերների՝ Հայաստանը պահպանում է մրցունակությունը տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) ոլորտում և առանձնանում է կենսունակ ու բարգավաճող ձեռնարկատիրությամբ: Տնտեսությունում նորարարական ՏՀՏ ոլորտից բացի զարգացած են զբոսաշրջության, հանքարդյունաբերության, սննդի վերամշակման և գյուղատնտեսության ոլորտները:

Չնայած գրանցած հաջողությունների՝ Հայաստանը դեռևս առերեսվում է կայուն տնտեսական աճի և սոցիալական զարգացման պահպանման մարտահրավերներին: Նորարարությունը կամ նոր գաղափարների, գործընթացների և արտադրանքի համակարգված փորձարկումը կարող է նպաստել վերոնշյալ մարտահրավերների հաղթահարմանը և խթանել Հայաստանի կայուն զարգացումը: Ինովացիոն քաղաքականության բարելավումները՝ միջգերատեսչական համակարգման, քաղաքականության տվյալահեն մշակման և գնահատման, ինչպես նաև սփյուռքի ներգրավման ու ներկայիս ինովացիոն ենթակառուցվածքի մեխանիզմների վերագնահատման միջոցով, առանցքային են տնտեսությունում նորարարության խթանման համար:

«Նորարարություն հանուն կայուն զարգացման. Հայաստանի համար» (I4SDR) ՄԱԿ-ի ԵՏՀ-ի առաջատար նախաձեռնությունն է, որի նպատակն է առաջարկել լուծումներ առկա մարտահրավերներին և աջակցել Հայաստանին տնտեսական զարգացման ճանապարհին: Ծրագիրը գնահատում է ինովացիոն քաղաքականության կառավարումը, ինստիտուցիոնալ դրվածքը, գործընթացները և մեխանիզմները, ինչպես նաև տրամադրում քաղաքականության առաջարկներ նորարարահեն, կայուն և ներառական աճի համար: Շվեդիայի կառավարության կողմից ֆինանսավորվող հետազոտական գործընթացը, որը ներգրավել է հարյուրավոր շահառուների, նպաստելու է Հայաստանի կառավարության ռազմավարական բարեփոխումների և կարողությունների զարգացման առաջիկա ջանքերին:

Նպատակ

«Նորարարություն հանուն կայուն զարգացման. Հայաստանի համար» (I4SDR) բարձրաստիճան մեկնարկային միջոցառումը կմիավորի երեք ՀՀ նախարարներին, Հայաստանում Շվեդիայի դեսպանին, ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ ՄԱԿ ԵՏՀ գործադիր քարտուղարին և տասնյակ ազգային ու միջազգային շահառուների՝ հետազոտության հիմնական արդյունքների ներկայացման, ինչպես նաև քաղաքականության ու զեկույցում կատարված առաջարկությունների շուրջ քննարկման նպատակով: Նախատեսվում է նաև ճաշի

UNECE

ընդմիջում: Հետազոտության արդյունքում կատարված առաջարկությունները հիմք կհանդիսանան Հայաստանում ՄԱԿ ԵՏՀ ապագա կարողությունների զարգացման համար:

Ամսաթիվ, ժամանակ և անցկացման վայր

Ամսաթիվը՝ Չորեքշաբթի, հունիսի 7, 2023թ.

Ժամը՝ Գրանցումը և սուրճի ընդմիջումը տեղի կունենան ժամը 9:00-ին, իսկ միջոցառումը՝ ժամը 9:30 – 13:30

Անցկացման վայրը*՝ Արմենիա Մարիոթ հյուրանոց, Տիգրան Մեծ սրահ, Ամիրյան 1, Երևան 0010, Հայաստան

**Տարածքը հարմարեցված է անվասայլակով տեղաշարժման համար: Լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք կապվել ՄԱԿ ԵՏՀ թիմի հետ:*

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Օրակարգ

Արմենիա Մարիոթ հյուրանոց, Տիգրան Մեծ սրահ

9:00-9:30	**Գրանցում և սուրճ** Հրավիրյալներին խորհուրդ է տրվում ժամանել վաղօրոք՝ գրանցվելու և Արմենիա Մարիոթ հյուրանոցի կողմից մատուցվող սուրճը, սառը ըմպելիքները ու խորտիկները վայելելու համար:
9:30-10:15	**Բացման խոսք** Միջոցառումը կմեկնարկի I4SDR գործընթացին աջակցություն ցուցաբերած պետական գերատեսչությունների և միջազգային կազմակերպությունների բարձրաստիճան ներկայացուցիչների բացման խոսքով: *Մոդերատոր՝ պարոն Յակոբ Ֆեքսեր, գրասենյակի ղեկավար, Ինովացիոն քաղաքականության մշակման բաժին, ՄԱԿ ԵՏՄ* • **Տկն Օլգա Ալգայերովա,** ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ, ՄԱԿ ԵՏՀ գործադիր քարտուղար • **Ն.Գ. պրն Ռոբերտ Խաչատրյան**, ՀՀ Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար • **Ն.Գ. պրն Վահան Քերոբյան**, ՀՀ Էկոնոմիկայի նախարար • **Ն.Գ. պրն Սարգիս Հայոցյան**, ՀՀ գիտության կոմիտեի նախագահ • **Ն.Գ. պրն Պատրիկ Սվենսոն**, Հայաստանում Շվեդիայի արտակարգ և լիազոր դեսպան • **Պրն Նիլս Սքոթ**, Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգողի պաշտոնակատար
10:15-10:45	**Նորարարություն հանուն կայուն զարգացման. Հայաստանի համար (I4SDR). ծրագրի արդյունքների ներկայացում** I4SDR հիմնական բացահայտումների և առաջարկությունների ներկայացում ՄԱԿ ԵՏՀ քարտուղարության կողմից:
10:45-11:15	**Սուրճի ընդմիջում** Արմենիա Մարիոթ հյուրանոցի կողմից մատուցվող տաք ըմպելիքների և նախաճաշի հյուրասիրություն:
11:15-12:15	**Քննարկում** Ազգային և միջազգային գործընկերները կմեկնաբանեն I4SDR հիմնական բացահայտումներն ու առաջարկությունները և կքննարկեն երկրի նորարարահեն զարգացման հեռանկարը: *Վարող՝ Տիկին Արևիկ Անապիոսյան, Գործընկերությունների և զարգացման ֆինանսական խորհրդատու, ՄԱԿ-ի մշտական համակարգողի գրասենյակ* • **Տկն Նատիա Նաձվլիշվիլի**, ՄԱԶԾ-ի մշտական ներկայացուցիչ • **Աշոտ Հովհաննիսյան,** Հայաստանում Ամերիկայի Առևտրի Պալատի նախագահ • **Տկն Իլոնա Տեր-Մինասյան,** Հայաստանում Միգրացիայի միջազգային կազմակերպության ներկայացուցչության գրասենյակի ղեկավար • **Պրն Ռուբեն Վարդանյան,** Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի (ՖԱՍԹ) համահիմնադիր • **Պրն Բագրատ Ենգիբարյան,** Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի տնօրեն

UNECE

	• **Տկն Կարոլին Գեգինատ,** Համաշխարհային բանկի Հայաստանի գրասենյակի տնօրեն
12:15-12:30	**Ամփոփում և փակման խոսք** • **Յակոբ Ֆեքսեր,** պատասխանատու պաշտոնյա, նորարարական քաղաքականության զարգացման բաժին, *ՄԱԿ ԵՏՄ*
12:30-13:30	**Ճաշի ընդմիջում** Միջոցառման ավարտից հետո մասնակիցները հրավիրվում են Արմենիա Մարիոթ հյուրանոցի կողմից մատուցվող ճաշի ընդմիջման: Ընդմիջումը կմիավորի ՄԱԿ ԵՏՄ քարտուղարությանը, փորձագետներին և պետական գերատեսչությունների ներկայացուցիչներին:

Կոնտակտային տվյալներ՝ տկն Դարյա Պոդգորեցկայա, Քաղաքականության վերլուծաբան, darya.podgoretskaya@un.org